# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՌՑ-ՄԱԱՊՁԲ -04/21

## ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԱՐՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ք. Երևան 30 03 2021թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերությունն, ի դեմս գլխավոր տնօրեն Մ. Միլիտոնյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Միկրորինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն, ի դեմս տնօրեն՝ Ռ. Մալխասյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, համատեղ հիշատակման դեպքում՝ «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված էլեկտրական սարքի (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը և վճարել դրա համար:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 /տասը/ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի N1 Հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ապրանք՝

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 /տասը/ օրից ավելի,

2.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված Ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալով, ժամկետում և հասցեով:

2.4.2 Ապահովել Ապրանքի մատակարարումը Պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել Պայմանագրով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 489 000 (չորս հարյուր ութսունինը հազար) ՀՀ դրամ, որից ԱԱՀ՝ 81 500 (ութսունմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է Պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, ապրանքը պահեստ ընդունելուց հինգ բանկային օրվա ընթացքում: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի Վճարման ժամանակացույցով (Հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը N 1 Հավելվածով սահմանված ստանդարտի պահանջներին:

4.2 Երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր:

4.3 Տեխնիկական բնութագրի պահանջներին Ապրանքի անհամապատասխանության կամ որակի նկատմամբ առարկություն ունենալու դեպքում Գնորդն իրավունք ունի պահանջել, իսկ Վաճառողը պարտավոր է իր հաշվին ապահովել Ապրանքի փոխարինումը և փոխադրումը:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված Ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ:

Մինչև Պայմանագրով Ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ապրանքը Գնորդին հանձնելու հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 3):

5.2 Եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Գնորդը Պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

5.3 Եթե մատակարարված Ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե Պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված Ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված Ապրանքը համարվում է ընդունված:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Ապրանքի մատակարարումը Պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց Պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան Կողմի գրավոր համաձայնության:

8.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

8.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.6 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.7 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.8 Պայմանագիրը կազմված է 8 /ութ/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

8.9 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 | ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովայի պող. 33/63 |
| «Ամերիաբանկ» ՓԲԸ | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ՝ 1570027609970100 | Հ/Հ՝ 2050022150151001 |
| ՀՎՀՀ 01501898 | ՀՎՀՀ 00824922 |
| | e-mail: info@microring.am |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

30 03 Հավելված N 1
2021թ. կնքված
թիվ ՀՀՌՑ-ՄԱԱՊՁԲ-04 /21 պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | մատակարարման | |
| չ/հ | Ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, և արտադրողի անվանումը ծագման երկիր | տեխնիկական բնութագիրը* | չափման միավորը | Միավոր գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր քանակը | հասցեն | Ժամկետը |
| 1 | 44511220 | Էլեկտրական ցանցերի պարամետրերի չափիչ գործիք SEW 4236 ER | | Բերված է ստորև | հատ | 489 000 | 489 000 | 1 | ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 | Պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օր |

| | | |
|---|---|---|
| **Հողանցման դիմադրությունը** | | |
| Չափումների սահմանները | | 20 Ohմ/ 200 Ohմ/ 2000 Ohմ |
| Լուծաչափ(разрешение) | | 0.01 Ohմ/ 0.1 Ohմ/ 1 Ohմ |
| Չափման սխալանք | | ±(2.0% + 3 հաշվարկային միավոր)(ед. счета) |
| Չափման սխեման | | 2,3,4 լարանի |
| **Ընդհանուր տվյալներ** | | |
| 1 | Ցուցիչը | (ЖКИ) առավելագույն ցուցադրվող թիվը 2000 |
| 2 | Ներքին հիշողությունը | 200 չափում |
| 3 | Սնուցման լարումը | 1.5Վ X 8 (AA տիպի) |
| 4 | Սարքավորման չափերը | 250 X 190 X 110 մմ |
| 5 | Քաշը | 1.43 կգ |
| 6 | Թվային չափիչ սարք 4236ER | 1 հատ |
| 7 | Լարեր սեղմիչներով (крокодилы) ( կարմիր-15մ,սև-10մ,դեղին-10մ,կանաչ-5մ) | 4 հատ |
| 8 | Սնուցման աղբյուր (մարտկոց) | 8 հատ |
| 9 | Ուսագոտի | 1 հատ |
| 10 | Արկղ (кейс) պլաստիկից պահպանման և տեղափոխման համար | 1 հատ |
| 11 | Հողանցման էլեկտրոդներ | 4 հատ |
| 12 | Միացման մալուխ համակարգչին միանալու համար | |
| 13 | CD սկավառակ | |

- երաշխիքային ժամկետ է սահմանվում 1 տարի ժամկետ
- Ապրանքը պետք է լինի չօգտագործված, համապատասխան փաթեթավորմամբ:
- Վաճառողը պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ կամ համապատասխանության սերտիֆիկատ:
- Մատակարարումն ու տեղափոխումը իրականացնում է Վաճառողը:

**ԳՆՈՐԴ**
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովայի պող. 33/63
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022150151001
ՀՎՀՀ 00824922
e-mail: info@microring.am

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*30 03 2021թ. կնքված*
*թիվ ՀՀՌՑ-ՄԱԱՊՁԲ-04/21 պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների* | | | | | | | | | | | | |
| չ/h | ԳՄԱ (CPV) | անվանումը | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 44511220 | Էլեկտրական ցանցերի պարամետրեր ի չափիչ գործիք | - | - | - | 489 000 | 489 000 | 489 000 | 489 000 | 489 000 | 489 000 | 489 000 | 489 000 | 489 000 | 489 000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողջական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովայի պող 33/63
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022150151001
ՀՎՀՀ 00824922
e-mail: info@microring.am

/ստորագրություն/
Կ.Տ

30 03 Հավելված N 3
2021թ. կնքված
թիվ ՀՀՌՑ-ՄԱԱՊՁԲ-04/21 պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2021թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2021 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2021 թ. դուրս գրված N ___ հաշիվ Ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ Ապրանքները՝

| N | Մատակարարված Ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ Ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ Ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3*
*30 մարտ 2021թ. կնքված*
*ՀՀՌՑ-ՄԱԱՊՁԲ -04/21 ծածկագրով պայմանագրի*

**Պայմանագրի կողմ**
«Միկրորինգ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովայի պող.33/63
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022150151001
ՀՎՀՀ 00824922

**Պատվիրատու**
«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ ՓԲԸ»
Հ/Հ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«07» ապրիլ 2021թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Էլեկտրական սարքի ձեռքբերման պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «30» մարտ 2021 թ.

Պայմանագրի համարը՝ N ՀՀՌՑ-ՄԱԱՊՁԲ -04/21

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «07» ապրիլ 2021թ. դուրս գրված N Ա6737172300 հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարվածապրանքների | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | ըստ պայման ագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայման ագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | Էլեկտրական ցանցերի պարամետրերի չափիչ գործիք SEW 4236 ER | **<u>Հողանցման դիմադրությունը</u>** Չափումների սահմանները | | 20 Օհմ/ 200 Օհմ/ 2000 Օհմ | 1 | 1 | 28.04.2021թ | 07.04.2021թ | 489.0 | Ապրիլ 2021թ |
| | | Լուծաչափ(разрешение) | | 0.01 Օհմ/ 0.1 Օհմ/ 1 Օհմ | | | | | | |
| | | Չափման սխալանք | | ±(2.0% + 3 հաշվարկային միավոր)(ед. счета) | | | | | | |
| | | Չափման սխեման | | 2,3,4 լարանի | | | | | | |
| | | **<u>Ընդհանուր տվյալներ</u>** | | | | | | | | |
| | | 1 | Ցուցիչը | (ЖКИ) առավելագույն | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ցուցադրվող թիվը 2000 | | | | | | |
| | | 2 | Ներքին հիշողությունը | 200 չափում | | | | | |
| | | 3 | Սնուցման լարումը | 1.5Վ X 8 (AA տիպի) | | | | | |
| | | 4 | Սարքավորման չափերը | 250 X 190 X 110 մմ | | | | | |
| | | 5 | Քաշը | 1.43 կգ | | | | | |
| | | 6 | Թվային չափիչ սարք 4236ER | 1 հատ | | | | | |
| | | 7 | Լարեր սեղմիչներով (крокодилы) ( կարմիր - 15մ,սև-10մ,դեղին-10մ,կանաչ-5մ) | 4 հատ | | | | | |
| | | 8 | Սնուցման աղբյուր (մարտկոց) | 8 հատ | | | | | |
| | | 9 | Ուսագոտի | 1 հատ | | | | | |
| | | 10 | Արկղ (кейс) պլաստիկից պահպանման և տեղափոխման համար | 1 հատ | | | | | |
| | | 11 | Հողանցման էլեկտրոդներ | 4 հատ | | | | | |
| | | 12 | Միացման մալուխ համակարգչին միանալու համար | | | | | | |
| | | 13 | CD սկավառակ | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | 489.0 | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

**Ապրանքը հանձնեց**

Ռ. Մալխասյան

ազգանուն, անուն

ստորագրություն

Կ.Տ.

**Ապրանքը ընդունեց**

ազգանուն, անուն

ստորագրություն

Կ.Տ.

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | Հարկային հաշիվ (ապրանքների մատակարարման) | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|---|
| 7 | Ապրիլ | 2021 թ. | | Ա | 6737172300 |
| [4] Մատակարարման ամսաթիվ | | | | | |
| 7 | Ապրիլ | 2021 թ. | | Ճշգրտվող հաշվի | |
| | | | | Սերիա | Համար |
| | | | | | |
| | | | | Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ | |
| | | | | | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | 30 Մարտ, 2021 թ. | ՀՀՌՑ-ՄԱԱՊՁԲ -04/21 |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

| Ապրանքներ մատակարարող (առաքող) անձի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 | 0 | 8 | 2 | 4 | 9 | 2 | 2 | | |
| [9] Անվանումը | «ՄԻԿՐՈՐԻՆԳ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) | | | | | | | | | |
| [10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 | 0 | 8 | 2 | 4 | 9 | 2 | 2 | / | 1 |
| [11] Բանկային տվյալները | Ինեկոբանկ ՓԲԸ | N 2050022150151001 | | | | | | | | |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ Փ. 33/63 | | | | | | | | | |
| [13] Վայրը, որտեղից ապրանքները մատակարարվում են | Ք. Երևան, Սայաթ-Նովա պ. 33/63 | | | | | | | | | |
| [14] Լրացուցիչ տվյալներ | | | | | | | | | | |

| Ապրանքներ ձեռք բերող անձի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| [15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 | 1 | 5 | 0 | 1 | 8 | 9 | 8 | | |
| [16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 | 1 | 5 | 0 | 1 | 8 | 9 | 8 | / | 1 |
| [17] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԻՉ ՑԱՆՑ» Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) | | | | | | | | | |
| [18] Բանկային տվյալները | Ամերիաբանկ ՓԲԸ | N 1570027609970100 | | | | | | | | |
| [19] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ 95 | | | | | | | | | |
| [20] Լրացուցիչ տվյալներ | | | | | | | | | | |
| [21] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | | | | | | | | |
| | Լիազորագիր | Համար | | | | | | | | |
| | | Ամսաթիվ | | | | | | | | |
| [22] Ապրանքների մատակարարման (առաքման) եղանակը | | | | | | | | | | |
| [23] Մատակարարվող (առաքվող) ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | Ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 | | | | | | | | | |

[24] Մատակարարվող ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Ապրանքի անվանումը | Չափման միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Տարա | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումար | Ընդամենը | Այդ թվում՝ բնապ. հարկ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1 | Էլեկտրական ցանցերի պարամետրերի չափիչ գործիք SEW 4236 ER | հատ | 1 | 407500 | | 407500 | | 20 | 81500 | 489000 | |
| Ընդամենը | | | | | | 407500 | X | X | 81500 | 489000 | |

Դուրս գրող՝ MALKHASYAN ROSTOM 1811550274
անուն, ազգանուն

*Ստացող՝ PETROSYAN BELA 6405650081
անուն, ազգանուն

07/04/2021 11:17:16 08/04/2021 13:17:31